Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան հիմնադրամ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Խաղային ուսուցանող իրավիճակների կիրառումը որպես ավագ նախադպրոցականի բնության մասին պատկերացումների ձևավարման միջոց

Կատարող՝ Երևանի թիվ 145 մանկապարտեզի դաստիարակ Սեդա Պետրոսյան

Ղեկավար՝ մ. գ. թ. Ա. Մ. Ավագյան

ԵՐԵՎԱՆ- 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

1. Խաղի ուսուցանող դերն ու նշանակությունը

2.Բնության մասին պատկերացումների ձևավորման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

3.Խաղային ուսուցանող իրավիճակների կիրառումն ավագ նախադպրոցակա նի բնության մասին պատկերացումների ձևավարման գործընթացում

4. Հետազոտական աշխատանք

Եզրակացություն

Գրականության ցանկ

Ներածություն

Նախադպրոցական տարիքում բնության մասին պատկերացումների, բնապահպանական մշակույթի ձևավորումը և էկոլոգիական դաստիարակությունը համարվում է կարևոր հիմնահարց: Բնության մասին պատկերցումների ձևավորումը բնապահպանական գիտելիքների, բնապահպանական մտածողության, բնության հանդեպ սիրո և պատասխանատու վերաբերմունքի ձևավորումն է, որն իրականացվում է բնության, շրջակա աշխարհի նկատմամբ հուզական դրական վերաբերմունքով, սեփական առողջության և շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատու վերաբերմունքով, բարոյական չափանիշների պահպանմամբ և աշխատանքային դաստիարակությամբ: Այստեղից էլ բխում է նախադպրոցականի էկոլոգիական դաստիարակության նպատակը. երեխայի մեջ ձևավորել ճանաչողական, բնապահպանական գիտելիքներ, բնության մասին տարրական պատկերացումներ, էկոլոգիական գիտակցություն, հոգատար, մարդասիրական վերաբերմունք՝ բնության, շրջակա միջավայրի նկատմամբ, բնության հետ հաղորդակցվելու ունակություն, բնապահպանական կուլտուրա:

Ժամանակակից մանկապարտեզի կարևորագույն խնդիրներն են զարգացնել նախադպրոցականի սեփական անձի և շրջակա միջավայրի մասին պատկերացումներ, հաղորդել բնության մասին տարրական գիտելիքներ, ձևավորել բնության մասին նախնական պատկերացումներ, նպաստել իմացական գործընթացների, ճանաչողական հետաքրքրությունների, հաղորդակցական հմտությունների զարգացմանը:

Բնության մասին պատկերացումների ձևավորման լավագույն միջոցներից մեկը հանդիսանում է խաղը, որը նպաստում է երեխաների ճանաչողական ոլորտի, ստեղծագործական ունակությունների և բնության հանդեպ հետաքրքրության ձևավորմանը:

Այս գործընթացում կարևորվում են հատկապես ուսուցման փոխգործուն մեթոդների և խաղային ուսուցանող իրավիճակների կիրառումը, որոնք առավելագույնս նպաստում են երեխաների ինքնուրույնության, տարբեր իրավիճակներում ճիշտ կողմնորոշման, համագործակցության հմտությունների ձևավորմանը,

ուսումնադաստիարակչական գործընթացը դարձնում են ավելի հետաքրքիր, ստեղծագործ և արդյունավետ:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել և վերլուծել խաղային ուսուցանող իրավիճակների կիրառման առանձնահատկություններն ավագ նախադպրոցականի բնության մասին պատկերացումների ձևավորման գործընթացում:

Հետազոտության խնդիրներն են.

Վերլուծել նախադպրոցականի բնության մասին պատկերացումների ձևավորման հասկացության էությունը:

Ուսումնասիրել խաղային ուսուցանող իրավիճակների կիրառման առանձնահատկությունները:

Իրականացնել հետազոտական աշխատանք:

Հետազոտության ընթացքում կիրառել ենք դիտում, զրույց, խաղային իրավիճակներ մեթոդները:

1. Խաղի ուսուցանող դերն ու նշանակությունը

Խաղը մարդկային գործունեության անենահետաքրքիր ձևերից մեկն է, այն ծագում է մանկության շրջանում և ուղեկցում մարդուն ողջ կյանքի ընթացքում:

Խաղի հիմնախնդիրը մշտապես հետաքրքրել է ոչ միայն հոգեբաններին և մանկավարժներին, այլև փիլիսոփաներին, հասարակագետներին, ազգագրագետներին, կենսաբաններին և հոգեթերապևտներին: Քննարկելով խաղային գործունեությունը տարբեր տեսանկյուններից գիտնականները միահամուռ նշում են, որ խաղը մարդկային մշակութային համակարգի ուրույն և անբաժանելի մասն է:

Խաղի դերն ու նշանակությունը նախադպրոցականի կյանքում մանրամասն ուսումնասիրվել և քննարկվել է հոգեբանության և մանկավարժության ականավոր գիտնականներ՝ **Լ.Ա.Վիգոտսկու, Ա.Լ.Ռուբինշտեյնի, Ա.Ն.Լեոնտևի, Դ.Բ.Էլկոնինի, Լ.Ա.Վենգերի, Ռ.Ի.Ժուկովսկայայի, Ա.Պ.Ուսովայի** և ուրիշների կողմից: Նրանք խաղը դիտում են որպես երեխայի համակողմանի զարգացման, ինքնահաստատման և ինքնակատարելագործման կարևորագույն միջոց: Նշում են խաղային գործունեության պատմական ծագումն ու սոցիալական բնույթը [2, 95]:

Խաղի ժամանակակից տեսությունը կառուցվում է խորհրդային հոգեբանամանկավարժության տեսական դրույթների հիման վրա, որոնք լրամշակվում են մանկավարժական նորագույն մոտեցումներով: Համաձայն նախադպրոցական դաստիարակության հայեցակարգի, խաղն իրենից ներկայացնում է ինքնարժեք գործունեություն, որը շնորհում է նախադպրոցահասակ երեխային ներքին ազատության և ինքնուրույնության զգացողություն, ցանկալին իրողություն դարձնելու վստահություն, իրականության իր տեսանկյունից նշանակալի կողմերը կրկին վերապրելու, հաճույք և բավարարվածություն զգալու լայն հնարավորություններ: Խաղային գործունեության ընթացքում երեխայի համար ստեղծվում են լավագույն պայմաններ (ազատ և բնական միջավայր, հուզական ներդաշնակություն, հավասարության մթնոլորտ)՝ հասակակիցների միջավայրում «այստեղ և անհապաղ» ինքնահաստատվելու համար: «Այստեղ և անհապաղ» ինքնահաստատվելու հնարավորությունը երեխայի խաղային գործունեության

հիմնական **դրդապատճառն է**, հետևաբար երեխաների խաղային գործունեության կազմակերպան և կառուցման գլխավոր սկզբունքը: Յուրաքանչյուր խաղացող երեխա առաջին հերթին ջանում է ինքնահաստատվել հասակակիցների միջավայրում, և խաղի առավելությունը, մանկան գործունեության այլ ձևերի համեմատությամբ այն է, որ խաղում կան ինքնահաստատվելու բոլոր հնարավորությունները: Խաղային գործունեության նշված բնութագիրը խոսում է այն մասին, որ այն իրենից ներկայացնում է ներքին պահանջմունքներով պայմանավորված գործունեություն, որն ունի յուրաքանչյուր երեխայի համար սուբյեկտիվ՝ ներանձնային նշանակություն և արժեք: Խաղն, իսկապես, ինքնարժեք գործունեություն է և բացարձակ անփոխարինելի է նախադպրոցականի կյանքում: Որևէ այլ գործունեություն չունի խաղային գործունեության նշված առավելությունները: Այսպիսով, խաղային գործունեությունը նախադպրոցականի անձնավորության կայացման ներքին գործոն է, որը չի կարող ամբողջապես բացատրվել և ընդհանրացվել, այն բավական սուբյեկտիվ է: Միևնույն ժամանակ, խաղային գործունեությանը բնորոշ է օբյեկտիվ մանկավարժական նշանակություն: Խաղն ուղղված է նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր զարգացմանը, օրինաչափորեն նպաստում է նրանց հոգեկանի զարգացմանը, հուզազգացմունքային ոլորտի հարստացմանը, հասակակիցների հետ փոխհարաբերությունների հաստատմանը, սեփական սոցիալական փորձի ձեռքբերմանը:

Խաղը նախադպրոցականի զարգացման և դաստիարակության արդյունավետ միջոց է և նրա հետագա զարգայման հիմնական գրավականը: Միավորելով խաղային գործունեության սուբյեկտիվ արժեքը և զարգացնող օբյեկտիվ նշանակությունը՝ կարելի է եզրակացնել, որ խաղը նախադպրոցական տարիքի երեխաների կյանքի և գործունեության կազմակերպման ամենանահարմար ձևն է: Համոզվելու համար նշվածում, փորձենք մանրամասն քննարկել խաղային գործունեության **հիմնական առանձնահատկությունները**:

1. Խաղային գործունեության ընթացքում բավարարվում են նախադպրոցականի հիմնական պահանջմունքները՝ ակտիվության և ինքնուրույնության, հաղորդակցման և մեծահասակների կյանքին անմիջականորեն հաղորդակից լինելու, արտաքին

աշխարհը ճանաչելու և այն արտացոլելու: Ինչպես նշում էր **Կ.Դ.Ուշինսկին**, երեխան խաղի ընթացքում փորձարկում է իր ապագա կյանքը և «փորձում սեփական ուժերը»:

2. Խաղային գործունեության ընթացքում բնականոն ճանապարհով զարգանում են երեխայի հոգեկան գործընթացները, ձևավորվում են նորագոյացություններ, որոնք նախապատրաստում և ապահովում են երեխայի հոգեկանի զարգացման հաջորդ փուլը:

3. Խաղային գործունեությունը նպաստում է գործունեության նոր ձևերի՝ աշխատանքի և ուսումնական գործունեության, առանձնացմանը: Երեխայի խաղն իր զարգացման ընթացքում ձեռք է բերում աշխատանքային և ուսումնական գործունեությանը բնորոշ կառուցվածքային տարրեր՝ **նպատակ, պլանավորում**, արդյունք, որոնք, ձևավորվելով խաղային գործունեության ընթացքում, տեղափոխվում են գործունեության այլ ձևեր:

4. Խաղային գործունեությունը բնական գործունեություն է, ուր չկա ճնշում և հարկադրանք, առկա է երեխաների համար բնական միջավայր: Խաղի ընթացքում երեխաներն ազատ են և ինքնուրույն, ունեն հավասար իրավունքներ և ինքնադրսևորման լայն հնարավորություններ:

5. Խաղը ստեղծագործական գործունեություն է, քանի որ այն նպաստում է յուրաքանչյուր խաղացող երեխայի անհատական առանձնահատկությունների բացահայտմանը և **կրեատիվ (ստեղծագործական) ընդունակությունների զարգացմանը**: Խաղի ընթացքում են լավագույնս դրսևորվում, հետևաբար և ախտորոշվում երեխայի ժառանգական նախադրյալները, հակումներն ու հետաքրքրությունները:

6. Խաղը աշխարճանաչման և աշխարհի արտացոլման եղանակ է, իմացական գործունեություն: Խաղային գործունեության ընթացքում ձեռբերած գիտելիքները կրկնակի արժեքավոր են՝ դրանք և տեղեկատվական են և գործնական բնույթի: Գիտելիքի՝ խաղում անմիջապես կիրառվելու կամ փորձարկելու հնարավորությունը, նպաստում է դրա յուրացմանը և ամրապնդմանը, խաղի ընթացքում ձեռբերած գիտելիքները չափազանց կայուն են:

7. Խաղային գործունեությունն իր բնույթով ուղղված է նախադպրոցականի հուզակամային ոլորտի զարգացմանը, հետևաբար և հիմնարար անձնային որակների

ձևավորմանը: Նախադպրոցականի անձնավորության ձևավորման գործընթացը պայմանավորված է նրա **հուզական և կամային ոլորտների** ներդաշնակ զարգացմամբ, ինչը լավագույնս ապահովվում է խաղային գործունեության ընթացքում [2, 96]:

Խաղը դիտարկվում է որպես առաջատար գործունեություն ոչ այն պատճառով, որ այն երեխայի կյանքում մեծ տեղ է գրավում, այլ որովհետև խաղի ընթացքում երեխայի հոգեկանում տեղի են ունենում գլխավոր փոփոխությունները, զարգանում են այն գործընթացները, որոնք անհրաժեշտ են զարգացման նոր առավել բարձր աստիճանների հասնելու համար: Խաղալով երեխան անընդհատ ձգտում է գնալ առաջ, նրա մոտ միաժամանակ աշխատում են ենթագիտակցությունը, խելքը և երևակայությունը, հետևաբար երեխաների զգացմունքային ոլորտի զարգացումը, ինչպես նաև մտավոր կարողությունների զարգացումն ավելի արդյունավետ կատարում են խաղի մեջ:

Խաղի բովանդակությունը ծառայում է ուսումնական խնդրի կատարմանը, որտեղ կարևոր է նաև դաստիարակչական կողմը: Հարկ է նշել, որ խաղը կարելի է դիտարկել և՛ որպես ուսուցման խաղային մեթոդ, և՛ որպես ուսուցման ձև, և՛ որպես երեխայի անձի զարգացման միջոց: Այն պետք է դիտել որպես ուսումնական գործընթացի կազմակերպման ձև: Երբ ուսուցումը համեմվում է խաղերով, երեխաների համար այն դառնում է ավելի հետաքրքիր, սրտամոտ ու ցանկալի: Խաղային մթնոլորտը հնարավորություն է տալիս, որ հետաքրքիր, սրտամոտ ու ցանկալի: [7]:

Ժամանակակից ՆՈՒՀ-ում ուսումնադաստիարակչական գործընթացի իրականացման նպատակով անհրաժեշտ է գտնել ուսուցման այնպիսի հնարներ, որոնք ոչ միայն սիրելի ու հետաքրքիր լինեն երեխաների համար, այլև ունենան ուսուցողական, ճանաչողական նշանակություն և միաժամանակ խթանեն ինքնուրույնության ձևավորմանը և ստեղծագործականության զարգացմանը: Նախադպրոցական տարիքում այդպիսի լավագույն միջոց է խաղը, խաղային ուսուցանող իրավիճակների ստեղծումը:

2. Բնության մասին պատկերացումների ձևավորման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

Էկոլոգիական դաստիարակությունը 21-րդ դարում կարևոր է մոլորակի և մարդկության համար: Բնության նկատմամբ վերաբերմունքը, էկոլոգիական պատկերացումները պետք է ձևավորել դեռ նախադպրոցական տարիքից: Անհրաժեշտ է ծանոթացնել երեխաներին բնության հետ, սովորեցնել շրջակա միջավայրի խնամքի կարևորությունը և կանոնները, հոգատարություն սերմանել շրջակա միջավայրի՝ ծառերի, խոտերի, կենդանիների և բնության մաս կազմող յուրաքանչյուր տարրի նկատմամբ: Երեխան պետք է հասկանա, որ ինքը բնության մի մասնիկն է: Նախադպրոցական տարիքից բնության հանդեպ վերաբերմունքը և էկոլոգիական հիմնարար պատկերացումները ձևավորելը խիստ անհրաժեշտ է [3, 19]:

Էկոլոգիական դաստիարակությունը երեխայի էկոլոգիական գիտակցության և մտածելակերպի ձևավորման, էկոլոգիական վարքագծի և մշակույթի (վարվելակերպի) դաստիարակչական գործընթաց է:

Ավագ նախադպրոցական տարիքի երեխաները չեն սահմանափակվում առանձին կոնկրետ փաստերի յուրացմամբ, այլ ձգտում են թափանցել իրերի էության մեջ, հասկանալ երևույթների կապը: Դրա շնորհիվ էլ հնարավոր է դառնում պատկերացումների և պարզագույն հասկացությունների ձևավորումը, որոնք կարող են դառնալ գիտելիքների համակարգի միջուկը:

Գիտական հետազոտություններով ապացուցված է, որ ավագ նախադպրոցականներն անցում են կատարում ընդհանուր պատկերացումներից դեպի կոնկրետ մտածողությունը: Զարգանում են երևակայությամբ առարկաները համեմատելու, նրանց ընդհանուր հատկանիշներով ընդհանրացնելու, իր մտքերը բանավոր ձևակերպելու և որոշակի դատողություն անելու կարողությունները: Մի շարք հեղինակների հոգեբանամանկավարժական հետազոտությունները ապացուցում են ավագ նախադպրոցականների կողմից բնության մեջ առկա տարբեր փոխադարձ կապերի, կախվածությունների յուրացման հնարավորությունները:

Այսպես, օրինակ, **Ս.Ն. Նիկոլաևայի** հետազոտությունները ցույց են տվել, որ ավագ նախադպրոցականներն ունեն բնության բազմաբնույթ փոխկախվածությունների ընկալման մեծ հնարավորություններ: Նա գտնում է, որ էկոլոգիական պատկերացումների ձևավորումը կարող է ընթանալ ողջ նախադպրոցական տարիքում, բայց կրտսեր նախադպրոցական տարիքում երեխաները կարող են ըմբռնել միայն եզակի կապերը, այն դեպքում, երբ ավագները կարող են ըմբռնել համալիր հատկանիշների կապերը [5, 37]:

Ե. Ֆ. Տերենտևան նույնպես հիմնավորում է, որ ավագ նախադպրոցականները ընդունակ են բացահայտելու ավելի բարդ կապեր և կապերի շղթաներ, մի շարք կենսացենոզային կապեր անտառային համակեցությունների, մարգագետինների, ջրամբարների ներսում, թռչունների չվելու պատճառները, կենդանիների և բույսերի կյանքի կախվածությունը միաժամանակ մի քանի գործոններից: Այսինքն՝ ավագ նախադպրոցականների մեջ արդեն ձևավորվում է նրանց շրջապատող բնության բավականին ճիշտ և ամբողջական պատկերը: Ժամանակակից նախադպրոցականը տիրապետում է բնության մասին պատկերացումների, գիտելիքների բավականին ընդարձակ ծավալի: Միայն թե հաճախ այդ գիտելիքները ձևավորվում են տարերայնորեն, հեռուստահաղորդումների, գովազդերի, մուլտֆիլմերի, հեքիաթների ազդեցությամբ:

Է. Ալեքսանդրյանը և ուրիշները նշում են. «Նախադպրոցական տարիքի երեխայի մտավոր դաստիարակության կարևորագույն խնդիրն է երեխաներին գիտելիքներ տալ բնության մասին: Այդ գիտելիքներն օգնում են բացահայտել, հասկանալ երևույթները, նրանց մեջ եղած էական կապերը, պատկերացումներ կազմել իրականության այս կամ այն բնագավառի առավել կարևոր կողմերի, օրինաչափությունների մասին» [2, 87]:

Ավագ նախադպրոցական տարիքում ձևավորվում են հիմնական մտածական կարողությունները, ինչպես նաև մտածական գործողություններ կատարելու ընդունակությունը (համեմատում, վերլուծություն, ընդհանրացում, դասակարգում), սկզբնավորվում է վերացական մտածողությունը, ըմբռնելի են դառնում պատճառահետևանքային կապերը: Այս տարիքում կարևորագույն խնդիրներից է ճանաչողական հետաքրքրության և իմացական կարողության՝ որպես ուսումնական

գործունեության դրդապատճառի ձևավորումը: Էկոլոգիական դաստիարակության դրդապատճառներից են նաև երեխայի ճանաչողական ակտիվությունը և շրջապատող միջավայրի հուզական ընկալումը:

Շարունակական էկոլոգիական կրթության համակարգի նախադպրոցական փուլի կազմակերպման յուրահատկությունը պայմանավորված է այդ տարիքի համար բնորոշ գործունեության հիմնական ձևով՝ խաղով: Ձևավորվում է նախադպրոցականների ներքին դիրքորոշումը շրջապատի մարդկանց նկատմամբ, զարգանում է սեփական «ես»-ի և սեփական արարքների նշանակության գիտակցումը: Ի տարբերություն կրտսեր նախադպրոցականների՝ փոխվում է ավագ նախադպրոցականների սոցիալական կարգավիճակը (դերը), որն արտացոլվում է գործունեության ձևի փոփոխման մեջ, առաջին հերթին՝ սյուժետադերային խաղերում: Ավագ նախադպրոցականի մեջ ի հայտ է գալիս տարրական պարտականությունների կատարման անհրաժեշտության զգացումը. նա ընդունակ է ինքնուրույն կատարելու մեծահասակի ցուցումները, բացի այդ, երեխայի մեջ ծագում է շրջապատի կողմից ճանաչվելու անհրաժեշտություն: Այս առումով էլ կարևոր է, որ հենց այս տարիքում ձևավորվեն երեխայի էկոլոգիական գիտակցությունն ու մշակույթը, ինչպես նաև բնության և մարդկանց նկատմամբ սեփական արարքները վերլուծելու ունակությունը: Էկոլոգիապես գրագետ մարդ դաստիարակելու համար կարևոր է դեռևս ավագ նախադպրոցական տարիքում երեխայի զարգացմանը խթանող պայմանների ապահովումը:

Էկոլոգիական դաստիարակության խնդիրների իրականացման արդյունավետությունն ակնհայտ է դառնում, եթե երեխաներին հաղորդվող բնապահպանական գիտելիքները պայմանականորեն համակարգվեն 2 խմբի մեջ.

1) Բնության երևույթների պատճառահետևանքային կապերի վերաբերյալ գիտելիքներ, որոնք կընդլայնեն երեխաների մտահորիզոնը, կնպաստեն երեխաների մտավոր զարգացմանը

2) գիտելիքներ, որոնց շնորհիվ կձևավորվեն հմտություններ, կարողություններ, որոնք կորոշեն երեխաների վարքի դրսևորումները: Մենք պետք է խորապես գիտակցենք էկոլոգիական կրթության ու դաստիարակության կարևորությունը, նպատակներն ու խնդիրները, իրականացման ուղիներն ու միջոցները [4, 51]:

Այսպիսով՝ անընդհատ էկոլոգիական կրթության և դաստիարակության համակարգում նախադպրոցական շրջափուլը տարբերվում է մյուս աստիճաններից երեխաների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններով, նրանց ընկալման և աշխարհի մասին գիտելիքների յուրացման ընդունակություններով: Մի շարք հեղինակներ նախադպրոցականների էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը դպրոցին նախապատրաստելու ճանապարհին դիտում են որպես առաջին և կարևոր փուլ, որպես անձի զարգացման անգնահատելի գործոն:

3.Խաղային ուսուցանող իրավիճակների կիրառումն ավագ նախադպրոցակա նի բնության մասին պատկերացումների ձևավարման գործընթացում

Նախադպրոցականի ուսումնադաստիարակչական գործընթացում խաղն ունի երեք գործառույթ.

- <<Առաջին, ամենապարզ գործառույթը ուսումնական գործընթացը թեթևացնելն և այն աշխուժացնելն է: Այս դերը կատարում են խաղում տեղ գտած հեքիաթային, երևակայական տարրերը, հետաքրքրաշարժնկարներն ու ուշագրավ բնագրերն և այլն:
- **Երկրորդ** գործառույթը երևակայության զարգացումն է ուսումնական գործընթացի թատերականացման ճանապարհով:
- **Երրորդ** գործառույթը **մրցութային է:** Խաղերը, սովորոբար մրցութային, մրցանակաբաշխութային տարրեր են պարունակում, որոնք երեխաներին ակտիվացնում են, ձևավորում առաջատարության ձգտում:

Խաղի նշված երեք գործառույթներն իրենցից ներկայացնում են խաղից, զվարճանքից ուսուցում գնացող աստիճաններ: Նախադպրոցական տարիքում առավել կարևորում են խաղերի դերը երեխաների մտավոր գործունեության ակտիվացման ոլորտում, այսինքն՝ խաղերի ուսուցանող, զարգացնող գործառույթը:

Խաղի ժամանակ երեխաները հաճույքով են հաղթահարում ծագած զգալի դժվարությունները, փորձում են իրենց ուժերը, զարգացնում ընդունակություններն ու տարաբնույթ ունակությունները: Խաղը ցանկացած ուսումնական նյութի յուրացման գործընթաց դարձնում է հետաքրքրաշարժ, գործունեությունը՝ գրավիչ, ստեղծում աշխատանքային տրամադրություն, թեթևացնում գիտելիքների և կարողությունների ձեռքբերման գործընթացը: Սակայն ոչ բոլոր խաղերն ունեն արժեքավոր կրթադաստիարակչական նշանակություն. այն խաղերն են արդյունավետ, որոնք երեխաներին ընձեռում են ճանաչողական գործունեություն ծավալելու հնարավորություն, այսինքն ուսուցանող են, երեխայի անձնը զարգացնող են:

Անդրադառնալով էկոլոգիական դաստիարակության գործընթացին, պետք է նշենք, որ այն կազամակերպվում է մեծահասակների կողմից և իրականացվում է մի շարք միջոցներով: Հիմնական միջոցը բնությունն է, բնության հետ շարունակական շփումը: Երեխայի մշտական կապը բնության հետ ապահովվում է մանկապարտեզի «բնության անկյան» միջոցով, երեխան մեծահասակների օգնությանմբ ծանոթանում է բնության երևույթներին, ինքնուրույն հետևում է բնության մեջ տեղի ունեցաղ փոփոխություններին, առանձնացնում է կենդանի և անկենդան բնության տարբերությունները, դրանց մեջ եղած կապը: Դիտարկումը երեխային բնության հետ ծանոթացնելու հիմնակակն մեթոդն է: Խաղային ուսուցանող իրավիճակները ևս կիրառելի են երեխաների բնության մասին պատկերացումների ձևավորման գործընթացում, դրանք առավելագույնս նպաստում են երեխաների ինքնուրույնությանը, արագ կողմնորոշմանը, ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը [1]:

Հատուկ կազմակերպված պարապմունքներից բացի էկոլոգիական գիտելիքներ կարող են փոխանցվել խաղ-պարապմունքների, խաղ-վիկտորինաների, պարապմունք-բանավեճերի և ուսուցման այլ ձևերի միջոցով: Արդյունավետ է նշված հիմնական միջոցների համատեղ կիրառումը բնության գրկում: Պարապմունքների համակարգում իր ուրույն տեղն է գրավում համալիր պարապմունքը, որը չափազանց

արդյունավետ է նաև նախադպրոցականի էկոլոգիական դաստիարակության ընթացքում: Էկոլոգիական դաստիարակության կազմաերպման ձևերն են.

-Էքսկուսիաներ և արշավներ,

-բացօդյա կամ բնության գրկում կազմակերպվող հանդեսները ու տոնակատարությունները,

-բնաճանաչողական տոնահանդեսները /ծաղկի տոն, բերքահավաքի տոն, վարդավառ, գարնանը ծառերի բողբոջման տոն/

-էկոլոգիական բնույթի միջոցառումները՝ շաբաթօրյակները, ծառատունկը, միջավայրի բարեկարգումը և այլն:

- Խաղային ուսուցանող իրավիճակները, որոնք ունեն էկոլոգիական ուղղվածություն [6]:

Էկոլոգիական դաստիարակության արդյունքնում երեխան սովորում է սիրել բնությունը և խնամքով վերաբերվել նրան, հասկանում է բնության բոլոր օղակերի փոխպայմանավորվածությունը և գիտակցում բնապահպան գործունեության անհրաժեշտությունը:

Հետազոտական մաս

Մանկապարտեզի ուսումնադաստիարակչական գործընթացում կարևորում ենք խաղերը և առաջարկում գործածել հատկապես այն ժամանակ, երբ անհրաժեշտ է երեխաների ուսումնասիրած նյութի յուրացման մակարդակը հասցնել գիտակցական աստիճանի: Խաղային իրավիճակների մանկավարժական արժեքն այս դեպքում այն է, որ խաղալիս ակտիվանում են երեխաների ինքնուրույն, համագործակցային, մտավոր գործունեությունը և ճանաչողական հետաքրքրությունները:

Վաղուց և բազմաթիվ ուսումնասիրություններով ապացուցված է, որ խաղերին նախադպրոցականների մասնակցությունը նպաստում է նրանց ինքնահաստատմանը, ինքնադրսևորմանը, ինքնաիրացմանը, տարբեր դրդապատճառներով պայմանավորված՝ դրանք ձևավորում են հաջողության, հաղթանակի հասնելու կայուն ձգտումներ, կամային որակներ:

Տեսական ուսումնասիրությունները հիմք ընդունելով կատարվել է հետազոտական աշխատանք ուղղված ավագ նախադպրոցականների բնության մասին պատկերացումների ձևավորման գործընթացում խաղային ուսուցանող իրավիճակների կիրառման արդյունավետությանը: Այս առումով մեր կողմից ընտրվել են մի քանի ուսուցանող խաղեր և ստեղծվել են խաղային ուսուցանող իրավիճակներ:

Էկոլոգիական բնույթի խաղերը նպաստում են երեխաների էկոլոգիական գիտակցության ձևավորմանը: Խաղերի թեման պետք է լինի երեխայի շրջակա միջավայրին նվիրված, բնության մեջ իրեն պահելու վարքի կանոնները, բնության օգտակարության, ինչպես նաև նրան հասցված վնասի հետևանքները: Առանձին շեշտադրում ունեն խաղային գործունեության այնպիսի ձևերի կազմակերպումը, որոնց շնորհիվ երեխայի մեջ ներդրվում են բարոյական վարքագծի ձևավորման, բնության, իրար նկատմամբ պատասխանատվության հիմքերը:

Մեր կողմից կազմակերպվել են ծրագրով նախատեսված է էկոլոգիական խաղերից մի քանիսը.

«Ճանաչիր միջավայրդ»,

«Ո՞վ ինչ ձայն է հանում»,

«Իմացիր, ի՞նչ կա պարկում»,

«Կարմիր, կանաչ, դեղին տերևներ»,

«Իմացիր, ի՞նչ ծառի տերև է»:

Ստեղծվել են նաև խաղային ուսուցանող իրավիճակներ, որոնց ընթացքում երեխաները ձեռք են բերել էկոլոգիական գիտելիքներ.

- Երեխաներին բաժանել ենք լոտոյի խաղաքարտեր ,որտեղ պատկերված են տարբեր կենդանիներ, ընթերցել ենք հանելուկ որեւէ կենդանու մասին երեխաները պետք է գուշակեն և քարտը դնեն այդ կենդանու պատկերի վրա: Այնուհետև առաջարկում ենք երեխաներին նշել նաև այդ կենդանու մասին այլ տվյալներ:
- Երեխաներին առաջարկում ենք լսել կենդանիների ձայները և գուշակել թե որ կեդանին է այդպես ձայն հանում:

- Երեխաները մեկը մյուսի ականջին ասում են մի կենդանու անուն և նա առանց ձայն հանելու շարժումներով ցույց է տալիս կենդանուն և խմբի երեխաները պետք է գուշակեն:
- Ներկայացրեցինք մի իրավիճակ մեր շրջապատող միջավայրի աղտոտվածության հետ կապված: Նախ հարցերի միջոցով զրուցեցինք երեխաների հետ թե ինչպես պետք է վերաբերվենք բնությանը, ինչ անենք այն ավելի մաքուր և գեղեցիկ պահպանելու համար, մաքուր օդ շնչելու համար: Հարցերի պատասխանները լսելուց հետո առաջարկեցինք նրանց խաղարկել մի իրավիճակ: Խնդրեցինք պատկերացնել, որ իրենք գնացել են գետակի մոտ, սակայն տեղ չկա նստելու և շուրջբոլորն աղբ է թափված: Խնդրեցինք երեխաներին ասել, թե նրանք ինչ կանեին, որպեսզի մարդիկ կարողանային նստել գետի ափին: Ինչպես կարող ենք ապահովել մեր շրակա միջավայրի մաքրությունը:

Կիրառված էկոլոգիական խաղերի ու խաղային իրավիճակների արդյունքում կարող ենք ասել, որ խաղերը երեխաների համար բավականին հետաքրքիր էին, նրանք սիրով մասնակցում էին, ակտիվ էին և ունեին բավականին լավ գիտելիքներ մեզ շրջապատող աշխարհի և էկոլոգիական վատթարագույն վիճակի մասին: Կարողանում էին առաջարկել լուծումներ առաջադրված հարցերին:

Եզրակացություն

Խաղի դերը նախադպրոցական տարիքում ունի առավել ուսուցանող, զարգացնող և դաստիարակող գործառույթներ, քան մարդու հասուն տարիքում: Մասնավորապես, ուսումնասիրության առարկա է երեխայի խաղային գործունեությունը գիտելիքների և կարողությունների ձեռքբերման գործընթացում, երբ խաղը հանդես է գալիս որպես ուսուցման մեթոդ՝ այդ համակարգի մեջ գրավելով համարժեք տեղ:

Խաղային գործունեությունը բնական գործունեություն է, ուր չկա ճնշում և հարկադրանք, առկա է երեխաների համար բնական միջավայր: Խաղի ընթացքում երեխաներն ազատ են և ինքնուրույն, ունեն հավասար իրավունքներ և ինքնադրսևորման լայն հնարավորություններ: Խաղն ապահովում է հուզականությամբ հագեցած հաճելի մթնոլորտ և համագործակցելու լավագույն պայմաններ:

Երեխային շրջապատող միջավայրի էկոլոգիական համակարգի բոլոր մակարդակները միմյանց և երեխաների հետ գտնվում են փոխազդեցության մեջ և նպաստում են անձի ձևավորմանը: Էկոլոգիական դաստիարակության գործընթացում ձևավորվում է խնդիրների մի ամբողջական համակարգ, որի լուծման համար անհրաժեշտ են կոնկրետ գործողություններ: Դրանց իրականացումը թերի կլինի, եթե կրթական համակարգի հաստատություններին աջակից չլինեն և իրենց ուժերը չմիավորեն հասարակական կազմակերպությունները: Էկոլոգիական դաստիարակության նպատակն է ամբողջ մոլորակի և հարազատ երկրի շահերն ու ապագան հետագայում պաշտպանելու կոչված փոքրիկ քաղաքացու ձևավորման գործը:

Միջին նախադպրոցական տարիքում երեխաներին պետք է տալ բնապահպանական գիտելիքների ծավալ, որը նրանց հնարավորություն է ընձեռում ճանաչել, սիրել ու գնահատել շրջակա աշխարհը, հասկանալ բնության մեջ իրենց ճիշտ դրսևորելու անհրաժեշտությունը, պահպանել որոշակի բարոյական նորմեր և զգալ իրենց բնության մի մասնիկը: Մանկապարտեզում իրականացվող բնապահպանական դաստիարակչական գործընթացը նպաստում է էկոլոգիական կուլտուրայի ձևավորմանը: Դա էլ իր հերթին դառնում է մարդկային ընդհանուր կուլտուրային

հաղորդակից դառնալու, նյութական և հոգևոր արժեքների պահպանմանը միտված շարժիչ ուժ:

Կարող ենք փաստել, որ բնապահպանական դաստիարակության իրականացումն ավելի արդյունավետ է, երբ այն իրականացվում է խաղային գործունեության և հատկապես ուսուցանող խաղային իրավիճակների ստեղծման պայմաններում: Նման մոտեցումն իր հերթին նպաստում է նաև երեխաների ինքնուրույնության, ստեղծագործաանության, բնությունն էլ ավելի արժևորելու հմտությունների զարգացմանը: Էկոլոգիական կրթության բովանդակության մեջ բնության մասին պատկերացումների ձևավորումը նպաստում է երեխայի շրջակա միջավայրում իր տեղի գիտակցմանը, նրա էկոլոգիապես գրագետ վարքագծի ունակությունների մշակմանը:

Գրականության ցանկ

1. Ասատրյան Լ. Թ. Սարգսյան Փ.Ա. Նախադպրոցական եւ կրտսեր դպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը: Երեւան 2002.
2. Մարության, Դալլաքյան, Նախադպրոցական մանկավարժություն, Երևան 2008.
3. Մարտիրոսյան Գ. Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում: Երեւան 2007.
4. Вакуленко Ю.А. Воспитание любви к природе у дошкольников:экологические праздники, викторины, занятия и игры. – Волгоград: Учитель,2008.
5. Николаева С. М., Теория и методика экологического образования детей, изд. центр "Академия" 2002.
6. https://gayanepirumyan.wordpress.com/2020/03/31/%D5%A3%D5%A1%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A5-%D6%83%D5%AB%D6%80%D5%B8%D6%82%D5%B4%D5%B5%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%A2%D5%AC%D5%B8%D5%A3/
7. https://multiurok.ru/files/khaghayin-tekhnologianer.html